**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1090-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 13-րդ կետի բ),ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգով քանի որ կառույցները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Վարուժան Վանիչկայի Հակոբյանի (ծնված՝ 15.02.1968 թ.) դիմումը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, չափագրման համաձայնությունը և 2024UAYZTP մուտքագրման ծածկագրով տեղեկանքը՝ ***որոշում եմ***

1.Հաստատել Լոռու մարզ, Փամբակ համայնք գյուղ Դեբեդ, 5-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 41 բնակելի տուն հասցեում գտնվող 06-034-0068-0007 ծածկագրով 0.23299 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի, հողամասի վրա առկա շինությունների չափերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Օրինականացնել Լոռու մարզ, Փամբակ համայնք գյուղ Դեբեդ, 5-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 41 բնակելի տուն հասցեում գտնվող Վարուժան Վանիչկայի Հակոբյանին, Վրեժ Վարուժանի Հակոբյանին, Մելանյա Վարուժանի Հակոբյանին, Սուսան Եղինյանին սեփականության իրավունքով պատկանող (վկայական՝ N 1744821) 06-034-0068-0007 ծածկագրով 0.23299 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում վերջիններիս կողմից ինքնակամ կառուցված այլ անձանց իրավունքներն

ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, 2017թ.-ին կառուցված ընդհանուր 115.75 ք/մ արտաքին չափերով բնակելի տունը:

3.Պարտավորեցնել Վարուժան Վանիչկայի Հակոբյանին, Վրեժ Վարուժանի Հակոբյանին , Մելանյա Վարուժանի Հակոբյանին, Սուսան Եղինյանին (հաշվեհամար՝ 900235422301 ինքնակամ կառույցի օրինականացում) վճարել 2017թ.-ին կառուցված ընդհանուր 115.75 քմ արտաքին չափերով բնակել տան օրինականացման վճարը՝ 62050 ՀՀ դրամ :

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

13 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ